ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 6 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.Քաղաքացի ---ի դիմումը մերժել՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Արթուր Պետրոսյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման բացակայության հիմքով:

2.Հաստատված համարել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Արթուր Պետրոսյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման փաստը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Արթուր Պետրոսյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին: